Strengthening Evidence-Based Management of Labour Migration in Armenia

«Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում»

Policy Brief
Համառոտագիր

This project is funded by
the EUROPEAN UNION
Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն
International Center for
Human Development

Միգրացիայի միջազգային
կազմակերպություն
International Organization
for Migration

Միգրանտների սոցիալական իրավունքների փոխադրելության խնդիրները. աշխատուժի փոխանակման միջպետական պայմանագրերի դերը

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

«...երեք պառավ, երկուսը մեռած, մընի բերնումն էլ շունչ չկա...»

Հայաստանի Հանրապետությունը այլ երկրների հետ աշխատանքային միգրացիայի վերաբերյալ ստորագրել է միջկառավարական երկկողմ չորս համաձայնագրեր Բելառուսի, Ռուսաստանի, Ուկրաինայի և Վրաստանի հետ: Նման համաձայնագրերը սկզբունքորեն էական դեր կարող են ունենալ երկրների միջև աշխատանքային միգրացիայի ընթացքում ծագող հարաբերությունների կարգավորման, միգրանտների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործում: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ այս համաձայնագրերից և ոչ մեկը, որպես ամբողջական փաստաթուղթ, լիովին չի կարգավորում դրանով նախատեսված հարաբերությունների բոլոր առանձնահատկությունները: Այսպես, դրանցում սոսկ ընդհանուր մոտեցումներ են ուրվագծված, մինչդեռ այն հիմնական մեխանիզմները, որոնք հնարավորություն կընձեռեին առավել հստակորեն կարգավորելու պետությունների տարածքում աշխատողների և նրանց ընտանիքի անդամների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանությանն առնչվող հարաբերությունները, ցավո՛ք, նախատեսված չեն: Ինչպես որևէ այլ համաձայնագիր կամ պայմանագիր, այնպես էլ միջկառավարական երկկողմ համաձայնագրերը ենթադրում են համաձայնագիրը կնքող կողմերի ազատ կամահայտնության դրսևորում: Ուստի համաձայնագրերի առանձին թերություններ, ինչպես նաև հարաբերությունների ոչ լիարժեք կարգավորումն ու միասնական մոտեցման բացակայությունը, թերևս, համաձայնագրերի անդամ օտարերկրյա պետությունների դիրքորոշման և օրենսդրական առանձնահատկությունների արդյունք է:

Միաժամանակ, հարկ է հաշվի առնել, որ աշխատանքային գործունեության արդյունքում ձեռք բերված իրավունքների հետագա իրականացման առումով կարևորվորվում են նաև աշխատանքային գործունեությանը որոշակիորեն փոխկապակցված այլ ոլորտներ, այդ թվում՝ կենսաթոշակային, սոցիալական ապահովությունը, եկամուտների կրկնակի հարկումը և այլն, կարգավորող առանձին համաձայնագրերի առկայությունը կամ բացակայությունը: Հենց սրանով է պայմանավորված աշխատանքային միգրացիայի վերաբերյալ կնքված միջկառավարական երկկողմ համաձայնագրերի արդյունավետությունը: Հատկանշական է, որ Հայաստանի հետ աշխատանքային միգրացիայի վերաբերյալ միջկառավարական երկկողմ համաձայնագրեր կնքած բոլոր պետությունների հետ մեր երկիրն ունի վարձու աշխատանքի դիմաց եկամուտների հարկմանը (եկամուտների կրկնակի հարկումը բացառելուն) վերաբերող համապատասխան համաձայնագրեր: 1992թ. մարտի 13-ին ստորագրվել է «Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին համաձայնագիր»-ը: Հիշյալ համաձայնագրի գործողությունը տարածվում է կենսաթոշակային ապահովության բոլոր տեսակների վրա, որոնք սահմանվել են կամ կսահմանվեն համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությամբ: Հայաստանի հետ աշխատանքային միգրացիայի վերաբերյալ միջկառավարական երկկողմ համաձայնագրեր կնքած պետություններից միայն Վրաստանն է, որի հետ մեր երկիրը չունի կենսաթոշակային ապահովության բնագավառում համագործակցության վերաբերյալ համապատասխան համաձայնագիր:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Իրավական կարգավորում, ինստիտուցիոնալ համագործակցություն, կառուցակարգեր

Ուղարկող երկրների տեսանկյունից աշխատուժի փոխանակման միջպետական պայմանագրերի (ԱՄՊ) նպատակները հիմնականում ներառում են ընդունող երկրների աշխատուժի շուկաներին շարունակական հասանելիության ապահովումը, գործազրկության մակարդակի մեղմումը, աշխատանքային արտագաղթի կանոնավորումը և ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծումը, աշխատողների իրավունքների ինստիտուտի թափանցիկության ապահովումը, արտերկրից դրամական փոխանցումների ծավալների աճը: Ուստի, այն դեպքերում, երբ Հայաստանը հանդես է գալիս որպես ուղարկող երկիր, ԱՄՊ-երը, կարծում ենք, պետք է ներառեն աշխատանքային միգրանտների իրավունքների պաշտպանության, երկրների համապատասխան մարմինների միջև համակարգման և համագործակցության իրավական հիմքեր, և պետք է ծառայեն նաև անկանոն միգրացիայի կանխարգելմանը: Անկանոն արտաքին միգրացիայի անցանկալի բարձր տեմպերի պայմաններում, Հայաստանը ԱՄՊ-եր բանակցելիս պետք է նախատեսի միգրացիայի վերահսկելության մեխանիզմներ. միգրանտների վերադարձի ու վերաինտեգրման հստակ կառուցակարգեր, ինչպես նաև քվոտաներ:

Ինչ, որտեղ, երբ...

Իրավամբ, Հայաստանի կողմից կնքված ԱՄՊ-երը հստակ մեխանիզմների բացակայության պատճառով թույլ և սահմանափակ կիրառություն ունեն: ԱՄՊ-երն առավել արդյունավետ կլինեն, եթե հիմնված լինեն երկրների միջև իրատեսական պահանջարկի ու առաջարկի վրա: Այս առումով նպատակահարմար է ԱՄՊ-երի ծրագրային կողմնորոշումը՝ հստակ տարանջատված ոլորտներով (օրինակ՝ ՏՏ, բժշկություն և այլն): ԱՄՊ-երը պետք է ներառեն երկու կողմերի հնարավորությունների շրջանակներում իրագործելի դրույթներ, որոնք առաջին հերթին կբխեն ՀՀ միգրանտ աշխատողների շահերից և կլինեն երկրների հնարավորությունների շրջանակներում: Կարևորում ենք նաև ԱՄՊ-երի շրջանակներում տեղեկատվության փոխանակման ակտիվ հարթակի ստեղծումը, որը հնարավորություն կընձեռի հնարավորինս համատեղել երկրների միջև թափուր աշխատատեղերի պահանջարկը ու առաջարկը:

Հայաստանը ԱՄՊ-երի կնքման նախաձեռնողական քաղաքականություն չի վարում, առկա համաձայնագրերն էլ հիմնականում ԱՊՀ այն երկրների հետ են, որոնց աշխատաշուկաներում, ըստ էության, պահանջարկը ցածր է, ինչպես և Հայաստանում (Ուկրաինա, Վրաստան, Բելառուս), իսկ աշխատողների սոցիալական իրավունքների պաշտպանության մակարդակը՝ անբավարար (Ռուսաստան): Ակնհայտ է, որ ԱՊՀ երկրների հետ առկա ԱՄՊ-երը չեն ապահովում միգրանտի վերադարձի և արտերկրում արժանապատիվ աշխատանքի ապահովման լիարժեք մեխանիզմներ: Մինչդեռ, ԱՄՊ-երի կնքման ակտիվացումը Հայաստանի համար կարող է ապահովել նաև վերադարձող միգրանտների կողմից տնտեսության ինովացիոն զարգացման նախապայմաններ:

Հայաստանի կողմից ԱՄՊ-երի կնքման և կնքված ԱՄՊ-երի կատարելագործման բանակցությունները պետք է ուղղել դեպի զարգացած և տնտեսապես ակտիվ երկրներ՝ Եվրամիության տարածաշրջան, Ասիական երկրներ, ԱՄՆ և մասնավորապես դեպի ՀՀ-ի համար աշխատանքային միգրացիայի տեսանկյունից առավել հետաքրքրություն ներկայացնող շուրջ երկու տասնյակ երկրներ (ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի թիվ 1593–Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրի» 5.3.1. ենթակետի զեկույց): Ընդ որում առավել նպատակահարմար է ԱՄՊ-երի կնքումը ոչ թե արդյունաբերական երկրների, այլ հենց ինովացիոն տնտեսություն ունեցող երկրների հետ, ուր աշխատուժի պահանջարկն առկա է առավելապես տեղեկատվական տեխնոլոգիաների, գիտահետազոտական աշխատանքների, ուսուցման և համանման այլ ոլորտներում:

Համառոտագիրը մշակվել է «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» ծրագրի շրջանակներում 2013թ-ի նոյեմբերի 8-ին կայացած «Աշխատանքային միգրանտների սոցիալական իրավունքների փոխադրելիության խնդիրները» վեկույցների կլոր սեղանի համատեղ քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Քննարկմանը մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: